

և լոռութիւնը. և ասել այսպիսի նշմարտութիւնն առաւել աղնիւ և հայրենասէր գործէ, քան լոռութիւնը:

Ուշադրութիւն դարձրէք մեր հսածէների (старообрядцы) կազմած այդ վեց համեմատական կէտերի վրայ: Զէ՞ որ մեր ամբողջ բանականը, անվերջ վիճաքանութիւնները, խօսակցութիւնը, քարոզչական (միստիօնաբական) ամբողջ շենքը, որ հիմնուած էր մի միայն վիճաբանութեան վրայ, խորտակւում է հիմքից: Հնապաշտը հարցնում է. «ղուք ցանկանում էք», որ ես միանամ ձեզ հետ: Ես պատրաստ եմ միանալ, եթէ կապացուցանէք ձեր համայնքի կանոնականութիւնը. այն ի՞նչ՝ կարդացէք մեր համեմատութիւնը»:

Այնուհետև լրագիրը դտնում է, որ պէտք է միսիօնաբական գործը հիմնիվեր բարեփոխել, կենդանացնել. այլապէս նա աղանդաւորների հետ յաջողութիւն չի ունենալ: Այս առթիւ եկեղեցական համբաւաբերը իւր № 46 ուժմ նկատում է «համակագիրը պահանջում է, որ մեր հնապաշտներին ազատութիւն տրուի և իրաւունք՝ սեփական թերթ ունենալու. սակայն կասկած չկայ, որ այսպիսի իրաւունք տալով նրանց, իսկ մեր կրօնական մամուլի վերաբերութեամբ թողնելով նախկին գրութիւնը, մենք ահագին առաւելութիւններ տուած կլինէնք հնապաշտներին՝ քան թէ պրաւողաւներին: Նախ կրօնական մամուլի համար պէտք է սաեղծել գոյութեան աւելի նպաստաւոր պայմաններ և հնաբաւորութիւն տալ նրան ազատ զարգանալու և այնուհետև տպա վտանգաւոր չեն լինիւ հնապաշտների և աղանդաւորների մեջենայութիւնները»:

—Ազատ թողէք իւրաքանչիւրին ազատորէն պաշտելու իւր Արարչին և աշխատեցէք նրա կեանքը մօտեցնել Աւետարանի պահանջներին. ահա գլխաւորը: Ժամանակ է, որ ծէսը ստանայ ծիսի նշանակութիւն և հաւատացողները զբաղուեն Աւետարանի պահանջած գործով ու կենցաղավարութեամբ: Քանի որ չի ստեղծուել մեր կեանքը և հաւատոյ համերաշխութիւնը, մենք մի միայն Աւետարանի վարկսեցիների նման կլինինք և ոչ Քըլուտոսի աշակերտաներ և նրա հիմնած եկեղեցու զաւակներ:

Անգլիական (Եպիսկոպոսական) Եկեղեցի

Անգլիական եկեղեցու կեանքում նշանաւոր տեղ են ըըռանուում իւրաքանչիւր տարի գումարուող եկեղեցական համաժողովները, որտեղ հաւաքւում և ներկայ են լինում եկեղեցական

և աշխարհական անձինք՝ քննելու եկեղեցական հասարակական իշխանքի ընթացիկ խնդիրները։ Այդ համաժողովները պաշտօնական չեն, բայց արտայայտում են գոյութիւն ունեցող եկեղեցական կուսակցութիւնների հայեացքները և օրէնսդրական աշխատանքի նիւթ են տալիս հոգեոր իշխանութեան։ Ավելապուլում այս տարրուայ հոկտեմբերին 4—7 տեղի ունեցող համաժողովը, լրագիրների տռւած տեղեկութիւններին նայելով թէ ներկայ եղող անդամների թուով և թէ կատարուած աշխատանքավ պէտք է համարել ամենայաջաջող։ Համաժողովի ծրագիրը եղել է շատ ընդարձակ։ Նա ընդգրկել է բացի եկեղեցական խնդիրներից, որոնք են—քրիստոնէութեան պաշտպանութիւնը, անհաւատատութեան դէմ, ոոր կտակարանի քննադատութիւնը, եկեղեցական կազմակերպութեան բարեփոխութիւնը, հանդանակների պարտաւորականութիւնը, եկեղեցիների միութիւնը, քահանաների պարզութիւնը, եկեղեցի յաճախելը և այլն, այնպէս էլ եկեղեցու ընկերվարական աշխատանքի վերաբերեալ խնդիրներ՝—անժու ժկալութեան դէմ մզուելիք կութիւը, չքաւորների ընակարանների բարեկարգութիւնը, դատախարակութիւնը, առևտրական կեանքի էտիկան (բարոյականը) և վերջապէս մասնաւոր կրօնական կեանքին վերաբերեալ խընդիրներ՝ ընտանեկան ազօթքի և Աստուածաշնչի ընթերցանութեան մասին։ Համաժողովի նիստերի վերաբերեալ հաշիւները անդիմական եկեղեցու ժամանակակից կեանքի բաւականին լիակատար պատկեր են տալիս՝ նրա բազմակողմանի աշխատանքի, շահերի և կարիքների։ Համաժողովի պարապմունքներից երեսում է, որ անդմայումն էլ եկեղեցի յաճախողների թիւը հետզհետէ պակասում է։ Նայելով Զ. Բուտովի վկայութեան, ժողովրդի ահազին մասսաններ միանագամայն խորթ են մնում կրօնից։ Համաժողովում այդ բանի պատճառներ են համարել ամենից առաջ կրօնական պարտաւորութեան զգացման անկումը, որն առաջ է եկել սիրելիական նոր քննադատութեան շնորհիւ և ապա կեանքի ընդհանուր ուղղութիւնը, որն ամենից բարձր է դասում նիւթական յառաջադիմութիւնն ու կոմֆօրտը։ Այժմս արդէն թողել են չըդարձողների մասին գոյութիւն ունեցող դաժան գաղափարները, ճգնաւորութիւնն ու անվստահութիւնը դէպի մեր անձը մօգայից դուքս են եկել, նրանց փոխարէն եղեալ է համարւում ընական քրիստոնէական առողջութեան հաճելի զգացմանքը, որը պահպանւում է չս փաւոր, հեշտ և եկեղեցական գործերին ոչ այնքան եռանդոս մասնակցութեամբ։ Կաւագոյն կրօնն է համարւում ամենահեշտը։ Խըսե չարիքի

առաջն առնելու միջոցներ՝ մատնանիշ եղան, որ հարկաւոր է աշխարհականներին առաւել մեծ չափով մասնակից անել եկեղեցական գործերին՝ վերականգնելով նրանց իրաւունքը. որ հարկաւոր է ժամանակակից դարձնել քարոզը, հարկաւոր է պահպանել եկեղեցական կարգերը, վերականգնել հին անցեալի եկեղեցական կեանը և կեւրակէն սուբք պահել:

Եկեղեցեաց միացման խնդրի մասին կարգացուեց նոր միդի դէկան Աէֆրոյի դասախոսութիւնը: Իրեն հիմք ընդունելով անդլիական և ամերիկական եպիսկոպոսների մշակած չորս պայմանները (ճանաչել բարձրագոյն հեղինակութիւն և բաւարարութիւն Սուրբ Կրքի, հաւատոյ առաքելական և ծիսական հանգանակները, Փրկչից ուանմանուած երկու խորհուրդները և պատժական եպիսկոպոսականութիւնը) հեղինակը համեմատում է կաթոլիկ և յոյն եկեղեցիները և գոտնում, որ առաջինն ըստ ամենայնի, իսկ Երկրորդը շատ բաներում անհամապատասխան են վերոյիշեալ պահանջներին: Յունական եկեղեցին Սուրբ Գրքը մեկնելիս սլաքագիր է համարում աւանդութիւնը և նրան սուրբ Կրքի չափ հեղինակաւոր նշանակութիւն է առլիո. իւր վարդապետութեան և խորհուրդների վերաբերութեամբ համաձայնութեան յոյս շի տալիս, չի ընդունում անդլիական երարխիայի՝ նուիրապետութեան իսկութիւնը: Միութեան աւելի մեծ յոյս են տալիս նոնկոնֆօրմիստ (անդլիական պետական եկեղեցի չընդունող) համայնքները և 293 սլաքիսի համայնքներից՝ գլխաւորապէս մեթոդիստները. (անդլիական աղանդ է, որը ծնունդ առաւ 1727 թուին և որի նպատակն է աւետարանական բոլոր պահանջների պահպանութիւնը): Դասախոսը դատաւ, որ վերջիններս կը միանան ամենազիւրին կերպով և որ նրանց քահանաներին կարելի է ընդունել առանց նոր ձեռնադրութեան:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Այս տարի հոկտեմբերին Սակոնիայի Գլեզդէն քաղաքում տեղի ունեցաւ Աւետարանական միութեան ՀՎՀ համաժողովը: Կաթոլիկութեան դէմ մաքառող այդ միութեան համաժողովին առիթ տուաւ պապականութեան հետքհետէ աճող քաղաքական նշանակութիւնը Գերմանիայում: Վերջին ժամանակներս միութեան անդամների թիւն աճել է 66 հազարով և հասել 250 հազարի: Համաժողովին կարգացուած գեկուցում